

Հրապարակման ամսաթիվը՝ 31.03.22թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԿՈՄԻՏԵ) ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՉՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1) թռիչքային անձնակազմերի պահանջների տեխնիկական և ադմինիստրատիվ նորմատիվային փաստաթղթերի անհրաժեշտ փոփոխությունների նախագծերի մշակելը.

2) թռիչքային անձնակազմերի պահանջների տեխնիկական և ադմինիստրատիվ նորմատիվային փաստաթղթերի և դրանցում կատարված փոփոխությունների առկայության ապահովելը.

3) Կոմիտեի թռիչքային գործունեության վարչության կողմից թռիչքային անձնակազմերի պահանջների տեխնիկական և ադմինիստրատիվ նորմատիվային փաստաթղթերից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների նախապատրաստելը.

4) թռիչքային անձնակազմերի լիցենզավորմանն առնչվող նորմատիվային փաստաթղթերի նախագծերի մշակելը.

5) թռիչքային անձնակազմերի թեստավորման ծրագրերի և/կամ դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրության կատարում և դրանք հաստատելու վերաբերյալ իր մասնագիտական գնահատականը ներկայացնելը.

6) թռիչքային անձնակազմերի գիտելիքների ստուգման գործընթացին մասնակցելը.

7) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա ավիացիոն ուսումնական հաստատությունների սերտիֆիկացման, ճանաչման և վերաճանաչման գործընթացներին մասնակցելը:

Փորձագետը ներգրավվում է 1 (մեկ) տարի ժամկետով:

Փորձագետը պարտավորվում է՝

1. բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած աշխատանքները,
2. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,
3. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

4. իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

Փորձագետի պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- առնվազն 5 (հինգ) տարվա աշխատանքային ստաժ ավիացիայի ոլորտում,
- մասնագիտական լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ է տալիս կիրառել այդ լեզվով հրատարակված մասնագիտական գրականությունը,
- համակարգչով ու ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Փորձագետի պաշտոնին ընդունվելու իրավունք չունի այն անձը, ով՝

1. պաշտոնից ազատվել կամ վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է ծառայությունը կարգապահական տույժ կիրառելու հետևանքով,
2. չի անցել օրենքով սահմանված փորձաշրջանը,
3. օրենքի խախտմամբ նշանակվել է պաշտոնի,
4. չի պահպանել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները,
5. դադարեցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
6. դատապարտվել է հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք,
7. երկու տարի անընդմեջ իր մեղքով չի ստացել վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտներ:

Աշխատանքի վայրը՝ քաղ. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան:

Փորձագետը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում գլխավոր քարտուղարի անունով (դիմումի ձևը կցվում է),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (դիպլոմների), վկայականի (վկայականների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք (տեղեկանքներ) համապատասխան մարմնից (մարմիններից)) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
- անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի կամ նույնականացման քարտի պատճենը,
- ինքնակենսագրություն:

Փորձագետի ընտրությունը կատարվելու է փաստաթղթերի և ինքնակենսագրականների ուսումնասիրության եղանակով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ անձնակազմի կառավարման բաժին՝ ներկայացնելով անձնագիր կամ էլեկտրոնային փոստի միջոցով (հեռ. 060-43-42-61, էլ. փոստ՝ shoushanik.mkrtchyan@gdca.am):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 17.15-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 05-ը ապրիլ, 2022թ.:

Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
գլխավոր քարտուղար

պարոն _____-ին

քաղաքացի _____-ից

(անունը, ազգանունը)

_____ հեռախոսահամարը

_____ էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ
ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ.
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ.
5. Այլ _____

_____ էջ:

Առդիր՝ _____ էջ:

_____ (ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ (դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ
տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից
ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու
մասին: